

րիշ ազահ մըն ալ ինքզինքը կախելու միտքը փոխեր է՝ տեսնելով որ չուանին համար շատ ստակ կ'ուզեն :

Ս երջապէս աս ախտը մարդս բնու-
թեանէ դուրս կը հանէ ու կը վայրենացը-
նէ . թէ իրեն և թէ իր ընտանեաց
հանգստութիւնը կը կորսնցընէ : Սեբէ
մտքէ վեր բան է ազահին ունեցած
հոգն ու վախը իր ընչիցը վրայ . աշտա-
րակի մը ու բերդի մը պահապան ոչ ան
կէց աւելի հոգ ոչ անկէց աւելի վախ
կը կրէ : Վիշեր ատեն յանկարծ ար-
թըննայ, ծառան ալ կ'արթնցընէ թէ
դռները գոց են արդեօք . գոց են ալ ը-
սես , ինքը նորէն կ'երթայ նայելու որ
կղպած են թէ չէ : Տէր չէ ունեցածին ,
այլ գերի . իրեն համար չպահեր իր ու-
նեցածը , այլ ժառանգները ուրախացը-
նելու համար , որ շատ անգամ կը միս-
խեն իր այնչափ հոգով ժողված հարըս-
տութիւնը : Սկիհանքի մէջ աշխատող
ներէն տարբերութիւն չունի . ինչպէս
անոնց հոգին կ'ելլէ՝ ուրիշներուն հա-
մար ոսկի փորելու ու հանելու , ասանկ
ալ ազահը կ'աշխատի կը քրտնի՝ գիշե-
րը քուն չունի , իրեն ժառանգներուն
հարստութիւն պատրաստելու համար :
Սկի բեռնաւորած գրաստ մը կը նմանի ,
ինք իր խոտէն ու գարիէն աւելի բան
մը չուտեր : Ս ինչ մեծ թշուառութի
է . թէ որ ազահը իր կամօքը յանձ չառ-
նէր աս պատիժը՝ ասկէց ծանր պատիժ
չէր կրնար ըլլալ իրեն :

Ազահին խաբուիլը աս է որ ոսկին ու արծա-
թը բարիք կը սեպէ . չհասկընար որ անոնք բա-
րեաց հասնելու միջոցներ են :

ԼԱՌՈՇՖՈՒՔՈՅ

Յած ու փցուն բնաւորութեան առաջին ա-
յաջըցը ազահութիւնն է :

ՓԻՒՅԻԶԻԵՕ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՔԵԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

Ա .

ԼՂԳԱԿՈՒԷ ԿՈՒ ԼՂԵԿԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԺՈՒԹԻՒՆ :

ԼՂԳԱՅԻՆ և ռամկական երգոց ճա-
շակներ ընծայելով ատեն ատեն օրա-
գրիս մէջ , իմացանք որ ինչպէս մեզի՝
այսպէս մերազնեայ ազգասիրաց ալ հա-
ճոյ են , և չենք դադարի երբեմն երբեմն
հրատարակել նոյնպիսի երգերը : Բայց
կ'ուզենք նաև մեր վսեմ հայկական
գրաբառ լեզուով գրուած նախնեաց ըն-
տիր բանաստեղծութեան կամ երգոց
ճաշակն ալ ընծայել . և կը յուսանք որ
հասկըցող սիրտ ու ականջ ունեցողնե-
րուն հաճոյ պիտի ըլլան աս գրուած
ները՝ որ կ'անուանենք Վնար Հայկա-
կան . վասն զի ինչ ախորժելի քան բա-
նաստեղծութի ու երգ , կամ ինչ անուշ
քան զհայրենիք և ազգային զրոյցը :

ԼՂԵԿԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ
հաճոյ կ'ընէ՝ պարզապէս լՂԳԱԿԱՆ կամ
ռամկական ըսուած երգերը . որոնք թէ-
պէտ և զուրկ ըլլան այն վսեմական և
գեղեցկաշար լեզուին գեղեցկութենէն ,
սակայն շատ հեղ քան զայն լեզուով
գրուածները ազգու և սիրելի կ'ըլլան .
վասն զի բանաստեղծութիւնը և զգաց-
մունքը լեզուին հետ կապուած չէ , կամ
գէթ այնչափ կապուած չէ , հապա զուր-
ցուած կերպին . իսկ զգացմունքը աւելի
նիւթին , և անոր՝ կարդացողին մերձա-
ւորութեանը հետ . անոր համար բա-
նաստեղծութիւնը կատարեալ է աս
յատկութիւններով՝ թէ և գնչուտ լե-
զուով գրուած ըլլայ . և մեր հրատա-
րակած քանի մը ռամկական երգերը աս
դիտմամբ՝ շատ վեր են Շ նորհալոյն
աննման քերթուածներուն շատէն . ան-
նման կ'ըսեմ՝ իր անխայթ քաղցրախօս
և հայկաբան ոճոյն համար , որով գե-

րազանց է հայոց քերթողաց մէջ, բայց
 այն վերը յիշուած յատկութիւնները
 քիչ անգամ կը ցուցնուի :

Ինոր հակառակ՝ կանքերթուածներ ալ վսեմական լեզուով գրուած , բայց ռամկական երգոց համ կուտան . ըսել է որ ազգային ոգւոյ և ակընջի անուշ կուգան . այսպէս Եարեկացւոյն քանի մը երգերը կարդալով , լեզուն թէպէտ և շատ բարձր և հեռու կը տեսնենք մերինէն , բայց հոգին մեր ռամկական հոգւոյն յարմար , և իբր թէ մեզի աւելի մօտ , ուստի աւելի ալ կը զուարճանանք . ասանկ ալ կամ ևս առաւել թէ որ բուն ազգային նիւթոց վրայ ըլլայ գրուածը . ըսել է որ գրուածներն են Բզգահոգի կամ բնիկ հայկական բանաստեղծութիւնք : Բզգային ոգին ինչ ըլլալը դիւրին է իմանալ կամ բացատրել , բայց Նայոց կամ որ և է ազգի մը յատուկ բանաստեղծութիւնը որը ըլլալը , և ինչու ան ըլլալը դժուար է բացատրել . թէ ազգային լեզուով և թէ օտար լեզուաց բանաստեղծութիւններ կարդալով կրնայ իմացուիլ աս բանս :

Յայտնի է որ բուն ազգային ոգին ազգային նիւթոց վրայ գրուածքներու մէջ աւելի կ'երևնայ , և մեր հայկական բանաստեղծութիւնն ալ հոն փոքն տուելու էր . բայց նախնեացմէ առ մեզ խիստ քիչ բան հասեր է ազգային նիւթոց վրայ . անոր տեղ կրօնական ոգին տիրած է նաև մեր քերթուածոց մէջ , որով բուն ազգային հոգւոյն յատկութիւն այնչափ չէ յայտնուեր աս նիւթիս մէջ . անոր համար մեր վերջի բանաստեղծից մէջ , այսինքն Ժ' Դարէն վերջը գրուած երգոց մէջ՝ որ զանազան նիւթոց վրայ գրուած են՝ աւելի կ'երևնայ ազգային ախորժակ քան թէ Շրջանորհալոյն գրուածներուն պէս գրուածոց մէջ : Ս'իայն թէ քաջ բանաստեղծը ազգային նիւթէ դուրս բաներուն վրայ ալ անանկ շնորհք մը կը ձգէ , որ անոնք ալ ազգահոգի և ազգային կ'ըլլան , ինչպէս 'Երեկացւոյն Սպիւնը , Լուսն Ժով 'ի Ժով Ժիծաղախիտը , և այլն :

Լսոնցմով մեր հայկական քնարին

ձայները իրեք կերպ պիտի հնչեն . մէկը բուն ազգահոգիի և հայկական վսեմ կամ պարզ լեզուով գրուած . մէկալը վսեմական կամ հայկաբան՝ բայց ոչ ազգահոգիի և ոչ բնիկ հայկական . երրորդը հայկական ոճով՝ բայց արտաքին նիւթոյ վրայ : Լռաջին տեսակն է աւելն ազգային նիւթի վրայ գրուած վառվռուուն երգեր . ասկէ 2600 տարի առաջ երգուած Հաբա-աօ Գնաց Արդ-գէս Տանուհն , կամ Երեմիէ երեմի , երգերէն մինչև մեր օրերս Լռամ աղբա-րին երգերը : Երկրորդ տեսակն է , հայկաբանութեամբ կամ զուտ գրաբառ գրուած զանազան սրբազան և արտա-քին նիւթոյ վրայ գրուածներ՝ ծանր և հանդարտ կերպով . ինչպէս են Շնորհալոյն երգոյ շատերը : Երրորդ տե-սակն է , որ թէպէտ օտար նիւթոյ վը-րայ գրուած է , թէ սրբազան և թէ արտաքին , բայց վառվռուուն հոգով և խաղուն լեզուով գրուած , և իբր թէ հայու մտքին ու լեզուին խաղալիկ ը-րած է նիւթը : Եւ կերպիս և ընդհա-նուր մեր բնիկ հայկական կերպին մէկ մասնաւորութիւնն է՝ ընտանեկան , ա-խորժելի և խաղալու կերպով մը բառե-րու ձայնակցութիւններ և մասնաւանդ բառից և բանից կրկնութիւններ ընել-այսպէս են Երեմիէ երեմի ալ , Հեծա-արի արգայն Երբաշէսն ալ , Հաբա-աօ Գը-նացն՝ ալ , Սասեաց Սայլէին ալ , և այլն . այսպէս է նաև հոս դրած երգերնիս , որ շատ նմանութիւն ունի Երեմի-ցւոյն Սայլի երգոյն , անոր համար կը կարծենք թէ նոյն հեղինակին շինածն ալ է :